Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

29/09/2017**թ**.

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Ապահովադիր)՝ ի դեմս **աշխատակազմի ղեկավար Նելսոն Զուլոյանի** մի կողմից, և **«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը** (այսուհետ՝ Ապահովագրող)՝ ի դեմս **գործադիր տնօրեն Արևշատ Մելիքսեթյանի** մյուս կողմից, հետագայում երկու կողմերը միասին կանվանվեն «Կողմեր», կնքեցին միմյանց միջև կնքված և 2017թ. հոկտեմբերի 01-ից ուժի մեջ մտնող սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. Կողմերը համաձայնվում են Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1.1. Պայմանագրի N 2 Հավելվածում՝ Ապահովագրված անձանց ցուցակում, ընդգրկվում են նոր ապահովագրված անձինք՝ համաձայն Համաձայնագրի N 1 Հավելվածի,
   1.2. Նոր ապահովագրված անձանց ավելացմամբ պայմանավորված՝
      1.2.1. Պայմանագրի 5.2 կետում «248,520,000,000 ՀՀ դրամ» բառերը փոխարինվում են «262,540,000,000 ՀՀ դրամ» բառերով,
      1.2.2. Պայմանագրի 6.2 կետում է «237,342,982 ՀՀ դրամ» բառերը փոխարինվում են «250,864,375 ՀՀ դրամ» բառերով:
   1.3. Պայմանագրի N 3 Հավելվածը խմբագրվում է նոր բովանդակությամբ՝ համաձայն Համաձայնագրի N 2 Հավելվածի:
2. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագրի ուժի մտնելու պահից և գործում է Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում:
3. Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, 0010, Հանրապետության 51, 53, տարածք 47, 48, 50
Հեռ.՝ + 374 10 59 21 21
Էլ. փոստ՝ info@ingoarmenia.am
ՀՎՀՀ՝ 02535733

Գործադիր տնօրեն՝
Արևշատ Մելիքսեթյան

Digitally signed by MELIKSETYAN AREVSHAT 2008830063

ԱՊԱՀՈՎԱԴԻՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3

Հեռ: +374 10 54-40-27
Էլ. փոստ՝ info@moh.am
ՀՎՀՀ 02507171

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝
Նելսոն Զուլոյան

Sep 29 2017 4:37 PM

Հավելված N 2
Սոցիալական փաթեթի շահառուների
առողջության ապահովագրության պայմանագրում
փոփոխություններ եվ լրացումներ կատարելու վերաբերյալ
29/09/2017թ. համաձայնագրի

«Հավելված N 3
Սոցիալական փաթեթի շահառուների
առողջության ապահովագրության պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

(ՀՀ դրամ)

Բաժինը, խումբը, դասը, ծրագիրը	Ծրագրի անվանումը	Վճարման ենթակա ապահովագրավճարի մասնաբաժինները և դրանց համապատասխան վերջնաժամկետները		
		մինչև նոյեմբերի 30-ը	մինչև դեկտեմբերի 25-ը	Ընդամենը տարի
07.03.01.04	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ	83,621,458	167,242,917	250,864,375

Ապահովագրող

Digitally signed by MELIKSETYAN AREVSHAT 2008830063
Date: 2017.09.29 17:11:10 GMT+04:00

(ստորագրությունը)

Ապահովադիր

Sep 29 2017 4:38 PM

(ստորագրությունը)

»